

ԽՕՍՔ՝ ՀՅԴ-Ի 120-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Posted on December 10, 2010 by Keghart




Category: [Opinions](#)






Հրանդ Մարգարեան, Հորիզոն, 8 Դեկտեմբեր 2010



Հայ Յեղափոխական Դաշնակցության 120ամեակի առիթով ասուելիք խօսքը հնարաւորինս պէտք է ամբողջական լինի, իւրաքանչիւր առիթ առանձնաբար բաւարար չէ ամբողջական խօսք ասելու համար: 120ամեակի տօնակատարութիւնների շարքում մի քանի առիթով ելոյթ պէտք է ունենամ: Ելոյթներս չեն կրկնուելու: Փորձելու եմ այդ մի քանի առիթը օգտագործելով, անդրադառնալ մեզ յուզող բոլոր խնդիրներին: Պակասն էլ կը լրացնեն մեր ընկերները, ովքեր նոյնպէս այս առիթով խօսք ասելու հնարաւորութիւն կունենան: Ահա եւ հենց սկզբից հայցում եմ ձեր ներողամտութիւնը՝ եթէ իւրաքանչիւր առիթով արտասանած խօսքիս մէջ չգտնեք ձեր բոլոր հարցերի պատասխանը:



Հրանդ Մարգարեան, Հորիզոն, 8 Դեկտեմբեր 2010



Հայ Յեղափոխական Դաշնակցության 120ամեակի առիթով ասուելիք խօսքը հնարաւորինս պէտք է ամբողջական լինի, իւրաքանչիւր առիթ առանձնաբար բաւարար չէ ամբողջական խօսք ասելու համար: 120ամեակի տօնակատարութիւնների շարքում մի քանի առիթով ելոյթ պէտք է ունենամ: Ելոյթներս չեն կրկնուելու: Փորձելու եմ այդ մի քանի առիթը օգտագործելով, անդրադառնալ մեզ յուզող բոլոր խնդիրներին: Պակասն էլ կը լրացնեն մեր ընկերները, ովքեր նոյնպէս այս առիթով խօսք ասելու հնարաւորութիւն կունենան: Ահա եւ հենց սկզբից հայցում եմ ձեր ներողամտութիւնը՝ եթէ իւրաքանչիւր առիթով արտասանած խօսքիս մէջ չգտնեք ձեր բոլոր հարցերի պատասխանը:

Մի բան եւս՝ խօսքս անպայման ուղղուած չէ միայն գանադահայութեանը: Այս պարագային դիմում եմ մասնաւորաբար արտերկրի մեր ժողովրդին: Կ'անդրադառնամ երեւոյթների, որ անպայման ձեզ մօտ մտահոգիչ հարցեր չեն, բայց հարցեր են ընդհանրապէս: Երբ փորձում ենք գնահատել ՀՅ Դաշնակցության անցած ուղին եւ նրա աւանդը հայ ժողովրդի պատմութեան մէջ, անշուշտ կարելի է շատ բան ասել, սակայն ես կը փորձեմ

անդրադառնալ երկու երեւոյթների, որոնք այսօր եւս կարելոր են եւ յուզում են մեր իրականութիւնը:

Ի՞նչ պատկեր էր ներկայացնում հայկական իրականութիւնը նախքան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ծնունդը:

Երկու մեծ՝ Օսմանեան եւ Ցարական կայսրութիւնների միջեւ բաժան-բաժան դարձած մի ազգ: Գը դարեայ ստրկատիրական, բռնատիրական պայմանները ոչ միայն գալիս էին վերջնականապէս խորթացնելու ազգի երկու մեծ հատուածները միմեանցից, այլեւ սպառնում էին ուժացման, ոչնչացման, սպառման:

ՀՅ Դաշնակցութեան ծնունդով սկիզբ առաւ մեր ժողովրդի երկու մեծ հատուածների ընտրեալների ժողովումը մէկ միացեալ կազմակերպութեան մէջ, մէկ ընդհանուր նպատակի համար ծաւալուեց մէկ ընդհանուր պայքար: Ու շարունակուեց պայքարը, եւ շարունակուելով էլեկտրականացաւ հայկական իրականութիւնը: Ի տես ծաւալուած միասնական պայքարի անհետացան նոյն ազգը բաժանող Գը դարեայ արգելքները, խոչընդոտող սահմանները: Մի քանի տասնամեակ երկարող պայքարից յետոյ հրի ու սրի, մոխիրների միջից ծնունդ առաւ Հայկական պետականութիւնը՝ իբրեւ հիմնական գրաւական ազգի մէկութեան ու յաւերժացման: Հայկական Պետականութիւն, որ վերջ դրեց մեր ժողովրդի Գը դարեայ կործանման ընթացքին: Մոխիրների միջից յառնեց մեր պետութիւնը եւ սկիզբ առաւ հայ ժողովրդի վերելքը, հզօրացումը: Քաղաքական գործօն դարձանք ու ապահովեցինք մեր ազգի գոյութիւնն ու զարգացումը:

Դաշնակցութեան ամենամեծ ձեռքբերումը ազգի մէկութեան ապահովումն էր եւ հայկական պետականութեան վերականգնումը:

Այդպիսով բաժան-բաժան ժողովրդից վերածուեցինք ազգի, կործանուող, սպառուող ժողովրդից դարձանք պետականութիւն, քաղաքական ինքնուրոյն գործօն: Մենք փրկուեցինք ազգի մէկութեան պահպանմամբ ու անկախ պետականութեան վերականգնումով:

Ազգային Անկախ Պետականութիւնը այսօր մեր հիմնական գրաւականն է ազգի անվտանգ գոյութեան ու համընդհանուր զարգացման. արդէն իսկ Արցախով մասամբ իրականացած, բայց վստահ՝ վաղը նորանոր յաղթանակներով Միացեալ Հայաստանի իրականացմամբ:

Մենք ունեցանք վերջին 9-10 դարերի ամենամեծ յաղթանակը, նուաճումը, մենք ձեռք բերեցինք զարգանալու, վերականգնուելու, նորանոր յաղթանակներ ունենալու հիմնական հնարաւորութիւնը: Մենք ձեւաւորեցինք հայ ժողովրդի առանցքը, մենք փրկուեցինք:

Եւ այսօր, մենք պետք է մեր Անկախ Պետականութեան փաստը, ինչպէս կ'ասեր մեծ գրող Հրանտ Մաթեւոսեանը, ընդունենք իբրեւ սրբութիւն, դաւանանք՝ անկախ այն

բանից, թե այնտեղ ով է իշխանութիւն, ով նախագահ, եւ ով վարչապետ:

Մեր անկախ Պետականութեան կարեւորութեան փաստը մենք ոչ մի բանի հետ համեմատելու իրաւունքը չունենք, նունիսկ մեզ հետ, մեր 120ամեայ մաքառումի, նահատակ ընկերների տառապանքի հետ, որովհետեւ ինչ-որ արեցինք ու անում ենք այդ մի կտոր հայրենիք կոչուող հողի համար արեցինք: Անկախ այն բանից թէ այդ փոքրիկ Հայրենիքը մեր հայրենիքի որ մասն է ներկայացնում: Անկախ այդ բանից՝ այն չի դադարում Հայրենիք լինելու եւ հիմնական երաշխիքն է ամբողջական Հայրենիք ունենալու մեր ծրագրային նպատակի իրականացման: Ազգային Անկախ Պետականութիւնը մերն է եւ առաջինը նախ մենք իրաւունք չունենք նոյնիսկ ակամայ խորթացնել այն մեր ժողովրդից, եւ ապա թոյլ չպետք է տանք, որ ուրիշները գրկեն այդ պետութիւնը իր ազգային բովանդակութիւնից:

Ազգի մեկութիւնը եւ ազգային անկախ պետականութիւնը, ասացի, սրբութիւն են ու դաւանանք: Ասացի գիտակցելով, որ ծայրայեղացնում եմ խօսքս, բայց անհրաժեշտ է այն ընկալենք հենց իբրեւ սրբութիւն ու դաւանանք, որպէսզի թշնամու պարտադրանքով բաժան-բաժան, աշխարհացրիւ դարձած մեր ազգը չդառնայ իրականում պառակտուած ժողովուրդ, որպէսզի մեր պետականութիւնը մնայ մերը, մեզ հարազատ եւ մենք տիրոջ եւ միաժամանակ ծառայի հոգեբանութեամբ նուիրուենք նրան, անենք մեր կարելին ու անկարելին, որպէսզի այն զարգացող, անվտանգ երկիր դառնայ՝ իբրեւ հիմնական կռուան Հայ Դատի լուծման:

Անցած 20 տարում, նորօրեայ Անկախ Հայաստանում, մենք նպատակ չդրեցինք իշխանութիւն դառնալ եւ չձեւաւորեցինք ընտրութիւններ յաջողեցնող կազմակերպութիւն կամ ընտրական մեքենայ, այլ առաջացրինք իրական կազմակերպութիւն, ստեղծեցինք գաղափարական շարժում, մտածողութեան հոսանք, քաղաքական մի ուժ, որը նպատակ դրեց պայքարելու նրանց դէմ, ովքեր փորձում էին ու փորձում են մեր պետութիւնը գրկել իր ազգային բովանդակութիւնից: Ղարաբաղեան պայքարով եւութիւն ստացած, Անկախութեան Հռչակագրով բանաձեւած մեր Անկախ Պետականութիւնը պետք է ունենար ազգային բովանդակութիւն: Որոշ շրջանակներ փորձեցին ու այսօր էլ փորձում են այն տեսնել բովանդակութիւնից զուրկ ինչ-որ վարչատարածքային միաւոր:

Մենք թէ իշխանութեան, թէ մտաւորականութեան եւ թէ հասարակութեան շարքերում առկայ ազգային բոլոր ուժերի հետ միասին յաջողեցինք:

Մեր անկախ պետականութեանը մղել տեր կանգնելու Ղարաբաղի ազատագրական պայքարին:

Մենք յաջողեցինք կատարել իշխանափոխութիւն, երբ այդ իշխանութիւնը համարձակուեց ցուցադրել ղարաբաղեան հարցում զիջողական տրամադրութիւններ:

Մենք յաջողեցինք ազգային պառակտման ճիգերին դէմ կանգնել եւ կատարել

հայրենիքի բարոյական պարտքը ակամայ արտերկրում յայտնուած մեր ժողովրդի կարեւոր հատուածի հանդէպ՝ հաստատելով երկքաղաքացիութեան օրէնքը:

Մենք յաջողեցինք Սփիւռք-Հայրենիք կապերի կարգաւորման համար ստեղծել Սփիւռքի նախարարութիւն:

Մենք յաջողեցինք պաշտօնական Երեւանին մղել միանալու Սփիւռքի ճիգերին Հայկական Տեղասպանութեան միջազգային ճանաչման հարցում:

Մենք յաջողեցինք մղել Հայաստանի այսօրուայ իշխանութիւններին նահանջելու իրենց բռնած ուղղուց հայ-թրքական արձանագրութիւնների ստորագրման ու վաւերացման հարցում: Վկայ ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումը եւ ՀՀ նախագահի վերջին շրջանի ելոյթները: Սակայն շտապեմ աւելացնել, որ ձեռք բերած յաջողութիւնները բաւարար չեն եւ պէտք է շարունակել պայքարը մինչեւ այն պահը, որ ՀՀ յետ քաշի իր ստորագրութիւնը այդ չարաբաստիկ արձանագրութիւններից:

Սակայն պէտք է ասեմ նաեւ հետեւեալը. Սփիւռքում այսօր լսուող՝ Սփիւռքը առանձնաբար կազմակերպելու, Արեւմտահայաստանի դատին առանձնաբար տեր կանգնելու, Տեղասպանութեան հարցը առանձնաբար հետապնդելու ծայները, կոչերը ուրախացնում, քաջալերում է նոյն ապագային տարրերին, որոնք օր առաջ փորձում են ձեռքազատուել համահայկական հարցերից:

Խնդիր բարձրաձայնում եմ, բայց նպատակ չունեմ հարցերը սրել: Իմ նպատակն է՝ սթափեցնել եւ համահայկական հարցերի լուծմանն ի խնդիր միասնականութիւն ստեղծել:

Սփիւռքի առանձնաբար կազմակերպական կառոյց ստեղծելու, անմեղ թուացող մտորումները, գիտակցաբար կամ անգիտակցաբար, հաւատում եմ, ուզում եմ հաւատալ՝ անգիտակցաբար, ծառայում են նոյն նպատակին. մասնատել ազգը կամ ազգային ճիգերը, հեռացնել հայկական պետականութիւնը հայկական Սփիւռքից, ստեղծել կեղծ մրցակցութիւն ազգային հատուածների միջեւ եւ տկարացնել մեզ ընդհանրապէս:

Նախ՝ Սփիւռք հասկացութիւնը իբրեւ մեկ ամբողջական միաւոր գոյութիւն չունի: Կան Սփիւռքեան տարբեր գաղթօջախներ: Առանձին կառոյց ձեւաւորել ի՞նչ անելու համար. նման կառոյցը կամ պէտք է ունենայ զուտ սփիւռքեան հարցեր իր օրակարգի վրայ կամ համահայկական հարցեր: Սփիւռքեան այդ ի՞նչ հարցեր են, որոնց համար առանձին կառոյց է անհրաժեշտ, որքա՞ն նմանութիւն ունեն իրանահայութեան հարցերը օրինակ գանադահայութեան հարցերի հետ, կ'ամ սիրիահայութեան հարցերը ֆրանսահայութեան հարցերի հետ, կամ լիբանանահայութեան հարցերը արգենտինահայութեան հարցերի հետ: Իսկ եթէ խօսքը վերաբերում է համահայկական հարցերին, ապա դրանց համար անհրաժեշտ է համահայկական կառոյց:

Առանձին կառոյց ձեւաւորելով՝ մենք մեր մէջ կը ստեղծենք հարցեր եւ կը հեռանանք համահայկական հարցերից, իսկ ինչպէ՞ս պետք է պատկերացնել համահայկական նոյնանման հարցերի վերաբերեալ առանձնաբար ցուցաբերուած կեցուածքները: Կարո՞ղ են լինել տրամագծօրէն տարբեր մօտեցումներ, քաղաքականութիւն, գործունեութիւն ազգի տարբեր հատուածների կողմից ազգին վերաբերող միեւնոյն հարցերի նկատմամբ: Չի կարելի նաեւ մտածել, թէ համահայկական հարցերը մեր պետականութեան հարցերը չեն, կամ մեր ժողովրդի մէկ մասի, կարելոր մէկ մասի հարցերն են: Մենք մէկ ազգ ենք եւ միասնաբար ունենք խոցուած ընդհանուր արժանապատուութիւն, միասնաբար ժառանգներն ենք 20րդ դարի առաջին ցեղասպանութեան: Մենք մէկ ազգ ենք եւ միասնաբար ունենք կորուսեալ Հայրենիք, ոտնահարուած իրաւունքներ, մենք մէկ ազգ ենք եւ ունենք մէկ դատ, մէկ միասնական պայքար:

Անըդունելի են նաեւ խոհեմութեան քօղի տակ թաքնուած այն կարծիքները, թէ կայ պետական շահ եւ ազգային շահ, եւ պետութիւնը միշտ չէ, որ կարող է ազգային շահերին հետամուտ լինել: Ճիշտ չէ, անընդունելի է այս մօտեցումը: Եթէ խօսքը մեր պետականութեան մասին է, այն ազգային պետականութիւն է եւ երբ պետականութիւնը կը շեղուի իր եութիւնից մեր հարցը այն իր ճիշտ հունի մէջ դնելն է, այլապէս՝ այն ինչ պետք է ազգին, պետք է մեր պետականութեանը, այն ինչ պետք է մեր պետականութեանը պետք է նաեւ մեր ազգին:

Այդուամենայնիւ ընդունում ենք, որ ինդիրը գոյութիւն ունի: Այո կա՛յ համահայկական կառոյցի անհրաժեշտութիւն եւ այդ կառոյցը մեր պետականութիւնն է: Ընդլայնենք Ազգային ժողովի կազմը կամ առաջացնենք վերադաս համահայկական նոր սենատ, դարձնենք այն համահայկական որտեղ նաեւ ներկայացուցիչներ լինեն Արտերկրից: Ճիշդ կը լինի որ այն ընտրուի համամասնական ցուցակով շրջանային կամ համափիւռքեան մակարդակով, թող նրանք մասնակից լինեն Ազգային ժողովի բոլոր քննարկումներին, սակայն նրանց վերապահենք համահայկական օրակարգերով վճռական ձայնի իրաւունք: Առաջարկութիւնս դեռ լուրջ քննարկում ու մշակում է պահանջում, բայց այն նոր գիւտ չէ, այդպէս են վարուել նաեւ այն պետութիւնները, որոնք ունեն մեծ սփիւռք:

Ի՞նչ կը տայ մեզ համահայկական Ազգային ժողովը.

1. Մեր պետութիւնը իրապէս կը դառնայ համայն հայութեան պետութիւն, արտերկրի հայութեան ուղղակի մասնակից կը դառնայ պետականութեան գործին: Այդպիսով ամբողջական կը դարձնենք այն գործընթացը, որ սկսեցինք երկքաղաքիութեան օրէնքի ընդունումով:
2. Նոր կառոյց ու տարանջատման առիթ չի ստեղծուի:
3. Սփիւռքը ուղղակի ընտրուած պատգամաւորների միջոցով մասնակից կը դառնայ

համահայկական եւ երկրին վերաբերող հարցերի վճռահատման եւ որոշումների գործադրմանը վերահսկելու մեջ:

4. Սփիւռքում եւս համամասնական ընտրակարգով ընտրութիւնների կազմակերպումը լուրջ խթան կը հանդիսանայ սփիւռքեան կազմակերպական կառոյցների համար զբաղուելու անկազմակերպ համայնքներով եւ մեր հայկական կազմակերպական ցանցի մեջ առնելով բոլոր այն հայորդիներին, որոնք այսօր ինչ-ինչ պատճառներով հեռու են մտում մեզանից եւ մենք եւս չենք զբաղուում նրանցով: Սփիւռքեան կեանքում կը վերականգնուի մրցակցութիւնը, ինչը անհրաժեշտ է զարգացման եւ կենսունակութեան համար:

5. Երիտասարդութիւնը, որ այս դարում ընդհանրապէս անտարբեր է գաղութային կազմակերպական հարցերի նկատմամբ եւ աւելի հետաքրքրուած է ընդհանուր հարցերով, յաւելեալ խթան կ'ունենայ հայկական կեանքի հետ կապուելու, երբ նրանց համահայկական-պետական գործերին մասնակցելու ասպարեզ տրուի:

Փաստօրէն սկսուում է մի նոր ժամանակաշրջան, հայութիւնը կազմակերպուում է ոչ միայն իր ինքնութիւնը պահպանելու, այլ համահայկական հարցերի մեջ դերակատար դառնալու համար:

Կարծում եմ՝ աւելորդ է այլեւս անդրադառնալ, որոշների առանձ-նանալու հիմնաւորումներին, բարձ-րացած աղմուկին, բամբասանքներին, անմակարդակ խօսակցութիւններին, թէ մենք այսպիսին ենք, նրանք այնպիսին, թէ մեր հայրենիքը Արեւմտահայաստանն է, նրանցը Արեւելահայաստանը, կամ նոյնիսկ Արեւելահայաստանի մի մասը, թէ այնտեղ կոռուպցիա կայ, մաֆիա, եւ ամէն ինչ օտար է, անյուսալի ու անիմաստ: Չեմ ուզում անդրադառնալ այս ամէնին, մեր մակարդակին յարիր չէ:

Մեր երկրում, ցաւօք, շատ բան լաւ չէ: Ասում եմ՝ լաւ չէ ու սրտիցս արիւն է գնում, բայց հէնց այսպէս, այս սրտցաւութեամբ պետք է վերաբերուել այդ փաստին: Իսկ որովհետեւ այնտեղ շատ բան լաւ չէ, մեր Հայրենիքը պետք ունի մեզ, մեր հայրենասիրութեան, մեր բարեացակամ վերաբերմունքին, մեր զոհաբերութիւններին: Եթէ այնտեղ ամէն ինչ լաւ ու հրաշալի լինէր, գուցէ այդքան մեր հայրենասիրութիւնը անհրաժեշտ չլինէր, գուցէ շատերս մեզ այլեւս մեր հայրենիքի համար աւելորդ զգայինք:

Բայց այսօր ահռելի գործ ունենք: Ե՛լ Հայաստանում, Ե՛լ Արցախում, Ե՛լ Սփիւռքում ու աշխարհում:

120 ամեայ մեր կազմակերպութեան նուիրումը, փորձառութիւնը, մեր յաղթանակներն ու թերացումները մեզ միայն մի ճանապարհ, մի ընտրանք են թողել. յանուն հայ պետականութեան յաւիտենութեան, հայ ժողովրդի միասնականութեան ու իրաւունքների վերականգնման, յանուն նոր յաղթանակների միշտ լինել առաջին շարքերում եւ մեր օրինակով վարակել իւրաքանչիւր հայի:

Դաշնակցութեան օր Է: Կարողանանք այդ օրն Էլ ընծայաբերել Հայաստանին ու հայ ժողովրդին:

